

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Հայ մատենագրության մեջ Ագաթանգեղոսի Պատմությունը միակն է, որ միջնադարում համաշխարհային տարածում է ունեցել: Նա բարգամանվել է (մեծ մասամբ համառոտ) հունարեն, լատիներեն, հին սլավոներեն, վրացերեն, արաբերեն և եթովպերեն: Ագաթանգեղոսի Պատմությունը արձագանք է գտել նաև ասորական մատենագրության մեջ: Ուստի կարելի է ասել, որ ասկեղարյան հայ մատենագրության այս արժեքավոր ստեղծագործությունը կարողացվել է գրեթե բոլոր միջնադարյան քրիստոնյա ժողովուրդների լեզուներով:

Ագաթանգեղոսի մեզ հասած հայկական բնագիրը բազում վեցերի առաքյալ է դարձել, նրա շուրջը նույնիսկ հատուրեն եւ գրվել: Նրա աղբյուրները որոնել են հայկական, ասորական, հունական և այլ վիպական կամ վկայարանական ստեղծագործությունների մեջ: Այնուամենայնիվ, բանասերները համաձայն են, թե այժմյան հայկական Ագաթանգեղոսի ճիմնական մասը, որի լեզուն դասական գրաբար է, ճինգերորդ դարում է խմբագրվել, թեև ըստ Ն. Աղոնցի և Ն. Մանուկ վերջնական խմբագրությունը կատարվել է ութերորդ դարում: Հայկական բնագրի խմբագրի անունը հայտնի չէ և «Ագաթանգեղոս» անունը (հունարեն՝ բարի հեռշտակ) հավանաբար ոչ թե նրա անունն է, այլ Գրիգոր Լուսավորչին տրված մի անվանում:

Ագաթանգեղոսի Պատմության առաջին և ամենակարևոր բարգամանությունը հունականն է: Սա ամբողջական ձևով հասել է միայն մեկ գրչագրով, որ Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարանում է գտնվում: Այս հունական բարգամանությունը ճիմնականում համապատասխանում է հայկական բնագրին: Այստեղ բացակայում է Ագաթանգեղոսի հայկական բնագրում գետնված վարդապետությունը, որն, ի դեպ, չենք գտնում բոլոր օտար բարգամանությունների մեջ:

Հունական Ագաթանգեղոսի մեջ առեղծվածային է թվացել նրա այն սկզբնական փոփոխությունը, որը բացակայում է հայկական Ագաթանգեղոսի բոլոր ձեռագրերի մեջ և պատմում է Արտավան Արշակունու դեմ Սասանյան Արտաշրի ապստամբության մասին: Ագաթանգեղոսի հայտնի ուսումնասիրող Ա. Գոտշմիդը այս հատվածը համարել է հունարեն բարգամանի ձեռնով ավելացրած: Ագաթանգեղոսի հունարեն բարգամանության ժա-

մանակը բանասերները դնում են մոտավորապես 2 դարի վերջը կամ է դարը:

Ագաթանգեղոսի հունարեն բարգամանվելը վերնական նշանակություն ունեցավ նրա լայն տարածման համար: Ժ դարում Սիմեոն Մեթափրաստեսն այն ամփոփեց և ավելի մի հունական համառոտ խմբագրություն, որից ԺԱ դարում բարգամանվեց վրացերեն, իսկ ավելի ուշ՝ նաև հին սլավոներեն: Հունական Ագաթանգեղոսից է ամփոփված ԺԲ դարում նաև լատինական համառոտ խմբագրությունը: Հունարենից են կատարված նաև արաբական բարգամանությունները:

Մինչև վերջին տարիները, հայագիտությանը հայտնի էր Ագաթանգեղոսի միայն մեկ արաբական բարգամանությունը, հայտնաբերված Ն. Մանուկ կոչման 1902 թվին Եգիպտոսի Սինայի անապատի ու Կատարին վաճառելու: Ըստ Ն. Մանուկի, սա պետք է բարգամանված լիներ մի կողմից հունական խմբագրությունից: Ինք, 1947 թվականին բեզիգացի բանասեր Ժ. Գարիտար լույս ընծայեց Մադրիդի Էստրուխի մատենադարանում գտնվող մի հունական խմբագրություն, որը նա կոչում է վարժ Գրիգոր Լուսավորչի: Ըստ նրան, Մանուկի հայտնաբերած արաբական բարգամանությունը կամ վարժը ծագում է այս հունական վարժից՝ մասամբ ուղղակի բարգամանված, մասամբ էլ փոխադրված: Թե՛ Ն. Մանուկ, թե՛ Ժ. Գարիտար ենթադրում են, որ բացի մեզ հայտնի հայկական ընդարձակ խմբագրությունից, պետք է գոյություն ունեցած լինի նաև մեզ չհասած մի հայկական խմբագրություն կամ վարժ, որը, ինչպես տեսնենք, բարգամանվել է նախ հունարեն և ապա արաբերեն:

Սակայն համաշխարհային երկրորդ պատերազմից մի քանի տարի անց Ժ. Գարիտար այցելելով նույն ու Կատարին վաճառելու, հայտնաբերեց Ագաթանգեղոսի Պատմության մի ընդարձակ արաբական խմբագրություն, որը բոլորովին տարբեր է Ն. Մանուկ կոչման հայտնաբերված վարժից: Ինչպես համեմատությունից պարզվում է, սա բարգամանված է հենց այն հունական Ագաթանգեղոսից, որը մեզ հայտնի հայկական բնագրի բարգամանությունն է:

Ապացուցելու համար, որ այս նորահայտ արաբական խմբագրությունը բարգամանված է ոչ թե ուղղակի հայկական բնագրից, այլ նրա հու-

նական բարգամանությունից, բավական է համեմատել հատուկ անունների ձևերը: Օրինակ, Արտաշատի փոխարեն արաբական բարգամանության մեջ գտնում ենք Արբաֆաթ (հուն. Արտաֆատ), Վաղարշապատի փոխարեն Ուալիրոֆտիստի, Անահիտի փոխարեն Արտեմիս և այլն:

Արաբական Ագաթանգեղոսը ստեղծված է հունարենից և ցուցաբերում հունականի նույնիսկ սխալների նկատմամբ: Խոսքով արևայի սպանությունից հետո զանաժողով Տրդատին արևմուտք փախցնելու դեպքի առթիվ հայերեն բնագրում Տրդատի մասին ասվում է. «մանկիկ մի փոփոխ»: Հունական բարգամանում է «ոչ փոփոխ մանկիկ»՝ հայերենի անորոշության իմաստ արտահայտող «մի» բանական բավական ժխտական մասնիկի տեղ ընդունելով: Արաբական բարգամանությունը նույնությամբ կրկնում է հունականը:

Սակայն ինչպես հունական Ագաթանգեղոսը տարբերվում է հայկականից, այնպես էլ նորագյուտ արաբական խմբագրությունը որոշ տարբերություններ ունի հունականից: Կան դեպքեր, երբ արաբական բարգամանությունը նոր բան է ավելացնում, իսկ այլ դեպքերում ընդհանրապես կրճատում է:

Ամենահետաքրքիրն այն դեպքերն են, երբ արաբական Ագաթանգեղոսը տարբերվում է հունականից և նմանվում հայկական բնագրին: Անակ Պարթև, իրեն Արաշես Սասանյանից հալածված ձեռագրելով, ապստամբում է Հայոց Խոսրով արևայի մոտ, որն այն ժամանակ գտնվում էր «յուսի գաւառի ի Խաղխաղ քաղաքի»: Հունականը չունի Ուտի տեղանունը, այնինչ արաբականը պահպանում է: Սա չէր կարող պատահականության արդյունք լինել:

Նման առեղծված է ներկայացնում նաև հունականի և արաբականի ծավալի միջև եղած փոփոխությունը: Արաբական նորահայտ բարգամանությունը սկզբում չունի այն հատվածը, որտեղ պատմվում է Արտավան Արշակունու դեմ Արտաշիր Սասանյանի ապստամբության մասին:

Արդ, քանի որ արաբական այս նոր ձեռագիրը բարգամանված է հենց հունականից, ինչպես բացատրել նման տարբերությունը հունականից և նմանությունը հայկական բնագրին: Հայտնի է, որ հունական բարգամանվել է 2-րդ դարում, իսկ մեզ հասած միակ ամբողջական գրչագիրը ԺԲ դարից է, ուստի դարերի ընթացքում բազմիցս արտագրվելով, կարող էր փոփոխությունների և աղավաղումների ենթարկվել: Հավանաբար նորահայտ արաբական Ագաթանգեղոսը բարգամանվել է հունականի մի ավելի հին գրչագրից, որը շատ ավելի հարազատ և մոտ է եղել հայկական բնագրին, քան մինչև այժմ հայտնի Լավրենտյան օրինակը և գուցե նույնիսկ չի ունեցել սկզբնական փոփոխություն (Արտաշիրի ապստամբությունը):

Ագաթանգեղոսի ներկա արաբական բարգամանության հայտնագործումը, անկասկած, կօգնի հայկական բնագրի տարբեր բարգամանությունների հետ առեղծված բազում հարցեր պարզաբանելուն:

Ագաթանգեղոսի Պատմության մինչև այժմ հայտնաբերված խմբագրությունները կարելի է երկու խմբի բաժանել. Ա. մեզ հասած հայկական բնագրից և նրանից կատարված հունարեն և արաբերեն (նորահայտ ձեռագիր) բարգամանությունները: Բ. Մեզ չհասած հայկական բնագրից (վարժ կոչված) կատարված հունարեն (հատ. Ժ. Գարիտար) և արաբերեն (հատ. Ն. Մանուկ) բարգամանությունները:

Ագաթանգեղոսի Պատմությունը օրեցօր անակրկալների է սպասում: Աշխարհի տարբեր Մատենադարաններում միջնադարի բազմաթիվ լեզուներով կարող են հայտնաբերվել մինչև այժմ անհայտ մնացած նորահուն ձեռագրեր, որոնք անշուշտ նոր լույս կսփռեն և կկայստեն «Ագաթանգեղոսի բարգամանության գաղտնիքը» լուծելու:

1942 թվից ապրում եմ Լ. Ֆ. 16 շենքի ծածկի տակ, շահագործման օրից չի նորոգվում անհատապես կատարողները շուտով փչացնողի պատճառով: Այս գալանշարները որոշեց մեր պատշգամբները փոխարինել պատշգամբներով: Եկան վաղից քանդել: Առիթից օգտվողանը մնալ թաղաքում և իմ վերանորոգել, որ գոնե աշխատեմ:

Քաղաքի տի և Սպանոլ բնակատեղության վարչապետ իրենց վրա վերցրին ի բնակարանների վերանորոգվող հրաժարվեց, ասելով թե՛ է դիպել սենյակիս պատերի թեքը, իսկ ես ասացի, թե՛ ուզում եմ, որ իրենց մեղքը վի: Նրանք խոստացան կանել մեր շենքի տանիքը, վեր կարանը և անձրևներից փակեցնելու: Ու սկսվեց թյունների «ռոմանտիկ շրջան»:

Ամենից առաջ հարկավոր դի բերել, գալի բաքը տալիս 15-ին հրշեջ կամ արտադրական կոմբինատի յեյանը և մի վարպետ մեր բարձրացան: «Ծխելով» տուրը թող նորոգվի, ծով ասացին, պատը թխելակցոր յիս 19-ին քաղաքի տի վարչության գլխավոր ինժեներ Ֆ. 6283 գրությամբ Սպանոլ բնակատեղության վարչության Լավրենտյան կարգադրեց և րանի «ներսի անհրաժեշտ աշխատանքները»: Հունիսի և նույն տնտեսության գլխավոր Սարգսյանը Ֆ. 540—10 գրությամբ կառավարչին գրեց իմ բնակարանի պարկետվելու է հետագա տարիներ նոր դիմում գրել շրջանի Յախչիբեկյանին, բացատրելով թողնվի հետագա սի 10-ին նույն բովանդակ գրեցի քաղաքի տի բնակ պետ ընկ. Սահակովին:

ՆՈՐ Գ

«Հայաստան» հրատարակած է:
ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆ.— «Գրական» 40 կող., տպագրանակ՝ 10 հոգի:
ԱՐՇԱԿՈՐ ԴԱՐՅԱՆ.— «Գրական» 7 հոգի 15 կող., տպագրանակ՝ 10 հոգի:
ԳՐԻՄՄ ԵՂՔԱՅԻՆ.— «Գրական» 28 կող., տպագրանակ՝ 10 հոգի:
ԶԻՆԳԻԶ ԱՅՏՄԱՏՈՎ.— «Գրական» 50 կող., տպագրանակ՝ 10 հոգի:
Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ.— «Գրական» 40 կող., տպագրանակ՝ 10 հոգի:
«Գրություն» հրատարակած է:
ԴԱՅԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— «Գրական» 40 կող., տպագրանակ՝ 10 հոգի:
Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ.— «Գրական» 40 կող., տպագրանակ՝ 10 հոգի:
ԳՐԻՄՄ ԵՂՔԱՅԻՆ.— «Գրական» 28 կող., տպագրանակ՝ 10 հոգի:
ԶԻՆԳԻԶ ԱՅՏՄԱՏՈՎ.— «Գրական» 50 կող., տպագրանակ՝ 10 հոգի:



«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ».— այսպես է կոչվում Ռուդոլֆ Խաչատրյանի այս կենսահաստատ նկարը:

Հոգիս չի դիմանում, աչքերս չեն դիմանում, հոգսա՞ծ եմ: Վահանը մտավ ֆաշիստական իտալական զորքի ստորաբաժանի մեջ:

Ուղիղոր տրորում էր իր քնաթիռիս աչքերը: Պատուհանի տակ մի սիրահար թռչուն բացեց ինքուրդ և սկսեց վերստին: Հոգսոցով արևելք

բան ծիծաղելը: Բայց ծիծաղողանա ապրել: Մեծ սիրտ ունիլը: Իսկ ինչիս սինսորն:

Գրական թիվ

10 հմ 65թ.
- 1965



«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ».— այսպես է կոչվում Ռուդոլֆ Խաչատրյանի այս կենսահամատառ նկարը: